

Բանեցված յուղերի վերամշակման տեխնոլոգիական արտադրամասի նախագիծ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

Ձեռնարկող՝

«Էմ-Բի-Էմ-Նյու» ՍՊԸ

Տնօրեն՝

Է. Մելքոնյան

Երևան-2018թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. Ընդհանուր տեղեկություններ3

1.1. Ձեռնարկողի վերաբերյալ տեղեկություններ.....3

1.2. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը.....3

1.3. Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)4

1.3.1. Գործունեության տարածքի ընտրությունը4

1.3.2. Տեխնոլոգիական լուծումներ.....5

1.3.3. Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր6

2. Նախատեսվող գործունեության տարածքի ելակետային բնապահպանական պայմաններ.....8

2.1. Տեղանքի աշխարհագրական դիրքը8

2.2 Տեղանքի կլիման9

2.3. Օդային ավազան.....12

2.4. Կենսաբազմազանություն.....12

2.5. Սոցիալական պայմաններ13

3. Բնապահպանական և սոցիալական ազդեցություններ13

3.1. Ազդեցությունը հողային ռեսուրսների վրա13

3.2. Ազդեցությունը մթնոլորտային օդի և ջրային ռեսուրսների վրա.....14

3.3. Թափոնների կառավարում14

3.4. Աշխատանքի անվտանգություն.....15

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....15

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

- Հավելված 1.** Նախատեսվող գործունեության տարածքի պետական գրանցման վկայագիր
- Հավելված 2.** Նախատեսվող գործունեության իրավիճակի հատակագիծ
- Հավելված 3.** Նախատեսվող գործունեության տեխնոլոգիական սխեմա
- Հավելված 4.** Նախատեսվող գործունեության արտադրամասի տեխնոլոգիական հատակագիծ
- Հավելված 5.** Հանրային քննարկման մանրամասներ

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1. Ձեռնարկողի վերաբերյալ տեղեկություններ

Սույն նախնական գնահատման հայտում ներկայացված բանեցված յուղերի վերամշակման տեխնոլոգիական արտադրամասի նախագծման աշխատանքների պատվիրատուն և հետագայում շահագործող է հանդիսանում «Էմ-Բի-Էմ-Նյու» ՍՊԸ-ն.

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Թեյշեբանի 3/4

Տնօրեն՝ Է. Մելքոնյան

Գործունեությունը նախատեսվում է իրականացնել ընկերության ք. Երևան, Թեյշեբանի 3/4 հասցեում գտնվող արտադրական տարածքում:

Ներկայացվող նախնական գնահատման հայտը հանդիսանում է նախագծային փաստաթղթերի բաղկացուցիչ մաս:

1.2. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը

Նախատեսվող գործունեության անվանումն է՝ «Բանեցված յուղերի վերամշակման տեխնոլոգիական արտադրամասի նախագծում»:

Տրանսպորտում և արդյունաբերության մեջ օգտագործվող յուղերը՝ կախված հետագայում դրանց օգտագործման նշանակությունից, բաժանվում են հետյալ խմբերի.

- a) Դիզելային, ավիացիոն և ավտոմոբիլային շարժիչային յուղեր, որոնք կիրառվում են հիդրավլիկ սարքավորումներում:
- b) Արդյունաբերության մեջ օգտագործվող յուղեր, որոնք իրենցից ներկայացնում են տրանսֆորմատորային, կոմպրեսորային և տուրբինային յուղերը:
- c) Օգտագործված նավթամթերքներ և նավթամթերքների խառնուրդներ:

«Էմ-Բի-Էմ-Նյու» ՍՊԸ-ն նախատեսում է իրականացնել բանեցված յուղերի հավաքում և վերամշակում, որի արդյունքում կստացվեն ապրանքային/մաքուր յուղեր և որպես արտադրության երկրորդային արդյունք՝ բիտումային խառնուրդ, որը նույնպես հանդիսանալով արտադրատեսակ՝ նախատեսվում է դրա իրացումը համապատասխան սպառողին:

Ներկայացվող աշխատանքների իրականացմամբ կստեղծվեն պայմաններ բանեցված կոմպրեսորային, ավտոմոբիլային, դիզելային, ինչպես նաև հալոգեններ չպարունակող բանեցված հիդրավլիկ յուղերի վերամշակման և հետագա վերաօգտագործման ուղղությամբ: Գործընթացը կարելի է դասել անթափոն արտադրության շարքում, քանի որ վերամշակման արդյունքում առաջացած բիտումային զանգվածը, որպես երկրորդային հումք կիրառելի է ջերմամեկուսիչ նյութերի պատրաստման և ասֆալտապատման աշխատանքներում: Ներկայումս պատվիրատուն (հետագայում՝ շահագործող ընկերությունը) ունի նախնական պայմանավորվածություններ մի շարք շինարարական ընկերությունների հետ, այն որպես երկրորդային հումք նրանց

հետագայում տրամադրելու ուղղությամբ: Այս գործընթացը նախատեսվում է կյանքի կոչել բանեցված յուղերի վերամշակման համար նախատեսված սարքավորումների տեղադրումից, կարգաբերումից և գործարկումից հետո:

1.3. Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.3.1. Գործունեության տարածքի ընտրությունը

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում Երևան քաղաքի հարավային արդյունաբերական գոտում՝ Արցախ-Թեյշեբան փողոցների խաչմերուկից դեպի արևմուտք (հասցե՝ Թեյշեբանի փողոց 3/4):

Տեղամասը տեղակայված է Շենգավիթ վարչական շրջանում և հարակից է Ներքին Շենգավիթ և Էրեբունի վարչական շրջաններին: Տեղամասը քաղաքի բնակելի հատվածներից հեռու է նվազագույնը 2կմ՝ տեղակայված լինելով նախկին Էլեկտրասարքավորումների գործարանից (ԴՅԸ) մոտ 800մ հեռավորության վրա: Այն ունի բարեկարգ տարածք:

Նախատեսվող գործունեության տարածքում առկա են դեռևս խորհրդային տարիներին կառուցված շինություններ, որոնք ժամանակին ծառայել են որպես արհեստանոցներ ու պահեստային տարածքներ՝ շահագործվելով կարճ ժամանակ:

Նախատեսված գործունեության արդյունքում չի նախատեսվում նոր տարածքների ներգրավում և բուսական շերտի վնասում/խախտում: Գործունեության համար ընտրված տարածքը տեխնիկական և ֆինանսական առումով առավել բարենպաստ է և նպաստավոր բնապահպանական տեսակետից:

Գործունեությունը նախատեսվում է իրականացնել 0.1334 հա նպատակային նշանակության հողատարածքում, որն ունի արդյունաբերական, ընդերքօգտագործման և արտադրական նշանակություն (հավելված 1, գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտների, իրավունքը՝ սեփականություն): Շինարարության կարիք չկա, քանի որ հողատարածքում առկա է 23.5x10.5մ, H=4.5մ չափերով ե/բ շինություն՝ համապատասխան պետական գրանցման վկայականով (բերված է հավելված 1-ում): Անհրաժեշտ տեխնոլոգիական սարքավորումները նախատեսվում է մոնտաժել արդեն գոյություն ունեցող շինության ներսում, որն էլ ծառայելու է որպես արտադրական տարածք:

Շինության արտաքին և ներքին ենթակառուցվածքներն (ջրամատակարարում և ջրահեռացում, գազամատակարարում և օդափոխություն, էլեկտրամատակարարում) առկա են: Գազատար խողովակը միացված է հողատարածքին կից գազատարից: Էլեկտրասնուցումն իրականացված է տարածքով անցնող էլեկտրասյունից:

Ջրամատակարարումը միացված է փողոցային ջրագծից, իսկ շինության կենցաղային կեղտաջրերը մոտակա կոյուղու դիտահորով հեռացվում են դեպի կոյուղու ցանց:

Տարածքում առկա է անձրևատար համակարգ, որը նույնպես միացված է բակային կոյուղու ցանցին, որի տրամագիծը թույլ է տալիս տեղափոխել ամբողջ ելքը:

1.3.2. Տեխնոլոգիական լուծումներ

Բանեցված յուղերի վերամշակման համար նախատեսված սարքավորումները պետք է տեղակայվեն և մոնտաժվեն գոյություն ունեցող միահարկ երկաթբետոնյա շինությունում:

Համաձայն ՀՀ Բնապահպանության նախարարի 25.12.2006թ. № 430-Ն հրամանի, որը վերաբերում է ՀՀ տարածքում գոյացող արտադրության և սպառման թափոնների՝ ըստ վտանգավորության դասի դասակարգմանը, տրանսպորտային մեքենամեխանիզմների և տրանսֆորմատորների բանեցված յուղերը դասվում են վտանգավորության 3-րդ դասին (չափավոր վտանգավորության թափոններ)՝ ունենալով հետևյալ ծածկագրերը՝ 54100211 02 03 3, 54100213 02 03 3, 54100202 02 03 3, 54100203 02 03 3:

Սույն նախագծով նախատեսվում է բանեցված յուղերի մաքրում՝ գործարանային արտադրության սարքավորումների միջոցով: Ներկայացվող գործունեությունը ներառում է հետևյալ արտադրական գործընթացները՝ բանեցված յուղերի ընդունում, պահեստավորում, թորում, ռեագենտային մշակում, առանձնացում, կայունացում և տարավորում՝ առաքման նպատակով: Մաքրման արդյունավետության բարձրացման համար կարևոր է արտադրական սարքավորումների ճիշտ շահագործումն ու անվտանգության ապահովումը, որը պետք է իրականացվի հատուկ մասնագիտացված աշխատողների կողմից:

Ստորև բերված են արտադրության համար նախատեսված մաքրման սարքավորումները և գործունեության տեխնոլոգիական սխեման.

- վակուում վառարան
- բարձր ճնշման տարաներ՝ համակցված հորիզոնական տեղադրման պոմպերով,
- ուղղաձիգ տեղադրման նստեցման պարզարան,
- ուղղաձիգ տեղադրման առաջնային շնեկ խառնարան,
- վակուում ֆիլտր,
- հավաքման տարա,
- ուղղաձիգ տեղադրման երկրորդային շնեկ խառնարան:

Տեխնոլոգիական սխեմայի և նախատեսվող հիմնական սարքավորումների վերաբերյալ առավել մանրամասները կներկայացվեն ՇՄԱԳ հաշվետվությունում:

1.3.3. Օգտագործվող բնատեսություններ և նյութեր

Նախատեսվող արտադրամասի առավելագույն հզորությունը կկազմի 650կգ/օր կամ (կամ մոտ 20տ/ամիս): Նշված արտադրողականության ապահովման համար անհրաժեշտ նյութերի հաշվարկային քանակությունները բերված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Կիրառվող նյութերի հաշվարկային քանակություններ

	Նյութի անվանումը	Տեսակարար ծախսը (1տ բանեցված յուղի հաշվարկով)	Տարեկան ծախսը
1.	Կաուստիկ սոդա (նատրիումի հիպոքլորիդ, 98%)	3 կգ/տ	720 կգ/տ
2.	Յուղի կայունացուցիչներ	20 կգ/տ	4800 կգ/տ
3.	Ջուր	10 մ ³ /տ	200 մ ³ /տ
4.	Բնական գազ	125 մ ³ /տ	30 000 մ ³ /տ

Ջրօգտագործում նախատեսված է միայն սարքավորումների հովացման համար, որի արդյունքում այն չի խառնվի այլ նյութերի հետ և չի փոխի իր քիմիական կազմը:

Յուղի վերամշակման գործընթացի պլանային շահագործման ընթացքում յուղային թափոններ չեն առաջանա: Տեխնոլոգիական սխեման ներառում է յուղի վթարային հավաքման հանգույց, որն իրենից ներկայացնում է.

- ներքին վթարային հավաքման առվակ՝ արտաքին տեղափոխման խողովակով,
- ստորգետնյա մետաղական ուղղանկյուն հավաքման հոր՝ համակցված պոմպակայանով:

Վերամշակման սարքավորումների ներկրումը, տեղափոխումը, մոնտաժումն ու գործարկումը նախատեսվում ավարտել մինչ 2018թ. վերջ:

Սարքավորումների մոնտաժային աշխատանքների ընթացքում օգտագործվելու են մետաղական կոնստրուկցիաներ, հաղորդալարեր, մեկուսիչներ, խողովակաշարեր, փականներ, պոմպեր և այլն, որոնց ցանկը կներկայացվի աշխատանքային նախագծում:

Տեխնիկական կարիքների նպատակով ջուրը նախատեսվում է օգտագործել միայն փակ շրջանառու պոմպերով և խողովակներով՝ տաք յուղերի հովացման համար:

Անձնակազմի խմելու-կենցաղային կարիքների համար շինությունում առկա է ծորակ և լվացարան:

Աշխատողների խմելու և կենցաղային կարիքների համար ջրածախսը կազմում է.

$$W_{\text{խմ. տնտ...}} = n \times N \times T_1 + n_1 \times N_1 \times T_1, \text{ որտեղ}$$

n - ինժեներատեխնիկական /ԻՏ/ աշխատողների թվաքանակ, 6 մարդ (2 մարդ x 3 հերթափոխ),

N -ԻՏ աշխատողների ջրածախսի նորմատիվ, 0.016 մ³օր/մարդ,

n_1 - բանվորների թվաքանակ, 3 մարդ (1 մարդ x 3 հերթափոխ),

T - աշխատանքային օրերի թիվն է տարվա ընթացքում, T = 365 օր:

N_1 - բանվորների ջրածախսի նորմատիվ, 0.025 մ³օր/մարդ,

$$W_{\text{խ.տ.}} = 6 \times 0.016 \text{ մ}^3 \times 365 + 3 \times 0.025 \text{ մ}^3 \times 365 = \mathbf{62,42 \text{ մ}^3/\text{տարի}}$$

$$W_{\text{խմ. տնտ.}}^{\text{միջ.օր}} = \mathbf{0.17 \text{ մ}^3/\text{օր}}$$

Խմելու կենցաղային ջրօգտագործման արդյունքում առաջանում են կեղտաջրեր, որոնց քանակը կկազմի՝

$$W_{\text{զ.չ}} = W_{\text{խ.տ.}} - \mathbf{ԿS_{\text{խմելու}}}$$
, որտեղ՝

$\mathbf{ԿS_{\text{խմելու}}}$ - ն ջրօգտագործման կորուստն է տոկոսներով, 5 %:

$$W_{\text{զ.չ}} = 62,42 - 62,42 \times 0.05 = 59,3 \text{ մ}^3/\text{տարի}$$

$$W_{\text{զ.չ}} = \mathbf{0,16 \text{ մ}^3/\text{օր}}$$

Ջրամատակարարման աղբյուր է հանդիսանում «Վեոլիա» ՓԲԸ Երևան քաղաքի «Էրեբունի» մասնաձյուղի խմելու-տնտեսական ջրամատակարարման ցանցը: Առաջացած կեղտաջրերը կհեռացվեն գործող կույուղատարով:

2. Նախատեսվող գործունեության տարածքի ելակետային բնապահպանական պայմաններ

Հաշվետվության այս բաժինի մշակման համար հիմք են հանդիսացել.

- նախագծային լուծումները և նախագծի տեխնոլոգիական բաժինը,
- տեղանքի գլխավոր հատակագծը,
- նախատեսվող գործունեության տարածքի ֆիզիկա-աշխարհագրական և կլիմայական բնութագրերը:

2.1. Տեղանքի աշխարհագրական դիրքը

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Երևան քաղաքի հարավային արդյունաբերական շրջանում: Մոտակա բնակելի «Էրեբունի» և «Ներքին Շենգավիթ» թաղամասերը գտնվում են այդ նախատեսվող գործունեություն տարածքից մոտ 2000մ հեռավորության վրա:

Տեղանքը գտնվում է ծովի մակերևույթից 927մ բարձրության վրա: Տարածքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին պլիոցենից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխա-նստվածքային ֆրացիաներով:

Գեոմորֆոլոգիական տեսակետից ներկայացվող տեղանքն ունի հարթ, որոշակի թեքությամբ ռելիեֆային բնույթ:

Լիթոլոգիական տեսակետից տարածքում կարելի է առանձնացնել հետևյալ երկրաբանակ տարբերակները.

1. ժամանակակից ալյուվիալ-պրոլյուվիալ գրունտեր, ներկայացված գորշ կավավազով ամուր կազմության, փթաց բույսերի մնացորդներով և արմատներով,
2. մանրախճային գրունտ մեծաբեկորների պարունակությամբ, ավազային և կավային լցանյութով մինչև 30-35%, քարաբեկորները ներկայացված են հրաբխային ապարներով, կավերի և ավազների ենթաշերտերով և ոսպնյակներով,
3. մեծաբեկորային գրունտ, խճի և մանրախճի խառնուրդով, քարակտորների արանքները լցված են մինչև 10% կավավազային և ավազային լցանյութով: Քարակտորները ներկայացված են հրաբխային ապարներով,
4. վերին չորորդական լճա-ալյուվիալ նստվածքներ ներկայացված Խճա-մանրախճային գրունտներով մեծաբեկորների պարունակությամբ, ավազային և կավային լցանյութով մինչև 30-35%, քարաբեկորները ներկայացված են հրաբխային ապարներով, կավերի և ավազների ենթաշերտերով և ոսպնյակներով:

Տարածքում սողանքային երևույթներ չեն դիտարկվել:

ՀՀՇՆ II-6.02-2006 «Մեյսմակայուն Շինարարություն Նախագծման Նորմեր» նորմատիվային փաստաթղթում ներկայացված սեյսմիկ գոտեվորման քարտեզը, ըստ որի ուսումնասիրվող տարածքը գտնվում է երրորդ սեյսմիկ գոտու մեջ: Այդ գոտուն համապատասխանում է 0.4g հորիզոնական արագացման արժեքը:

2.2 Տեղանքի կլիման

Ընդհանուր առմամբ Երևան քաղաքի կլիման կրում է արտահայտված ցամաքային բնույթ՝ շոգ ու չոր ամառներ, չափավոր ցուրտ և անկայուն ձնածածկով ձմեռներ: Կլիմայական առանձնահատկությունները պայմանավորված են ամռանը՝ հարավից չոր տաք օդային զանգվածների, իսկ ձմռանը՝ հյուսիսից ցուրտ օդային զանգվածների ներխուժմամբ: Տեղանքի կլիմայական պայմանները բերված են ըստ Երևան-«Էրեբունի» օդերևութաբանական կայանի տվյալների:

Ջերմաստիճանի բացարձակ մինիմումը կազմում է -30°C , իսկ բացարձակ մաքսիմումը՝ $+42^{\circ}\text{C}$: «Շինարարական կլիմատոլոգիա» СНиП II-7.01-96 տվյալների համաձայն, Երևան քաղաքի հարավային արդյունաբերական շրջանի օդի միջին ջերմաստիճաններն ըստ ամիսների բերված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Օդի միջին ջերմաստիճանը, $^{\circ}\text{C}$

Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների												միջին տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
-3.4	-0.9	5.3	12.4	17.4	21.6	25.5	25.2	20.5	13.5	6.5	-0.2	12.0

Օդի հարաբերական խոնավության բնութագիրը ըստ Երևան-«Էրեբունի» մետեոկայանի տվյալների բերված է աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3. Օդի հարաբերական խոնավությունը, %

Միջին ըստ ամիսների, %												միջին տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
78	73	63	55	55	49	45	44	49	60	72	78	60

Տեղումների բնութագիրն ըստ Երևանի «Էրեբունի» օդերևութաբանական կայանի տվյալների, բերված է աղյուսակ 4-ում: Էրեբունի կայանը գտնվում է 888 մ ծ.մ. բարձրության վրա: Կլիման բնութագրվում է տեղումների ցածր քանակով: Տեղումների միջին տարեկան նորման չի գերազանցում 316 մմ: Շրջակայքում գոլորշիացման էներգետիկական հնարավորությունները զգալիորեն գերազանցում են տեղումների քանակը, այդ պատճառով կլիման չոր է:

Չյան ծածկույթի առավելագույն դեկադային բարձրությունը կազմում է 58 սմ, իսկ գրունտի սառչման առավելագույն խորությունը՝ 60 սմ: Հաստատուն ձնածածկույթ գոյանում է ոչ ամեն տարի:

Աղյուսակ 4. Տեղումների բնութագիրը

Տեղումների բնութագիրը	Տեղումների ամսական քանակը, մմ												Տարեկան
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
Միջին քանակը	24	26	32	43	52	27	13	10	13	26	28	22	316
Առավելագույն օրական քանակը	21	23	34	29	42	31	29	26	51	35	36	28	51

Քամու նվազագույն միջին արագությունը հուլիս ամսին, որի կրկնվողությունը հասնում է 16 %, կազմում է 7.2 մ/վրկ: Քամու բացարձակ առավելագույն արագությունը 20 տարի մեկ անգամ հասնում է 24 մ/վրկ: Նորմատիվ հողմաբեռնվածքը կազմում է 45 կգ/մ²:

Քամու ակտիվության վերբերյալ տվյալներն ըստ Երևանի ”Էրեբունի” հիդրոթերմութաբանական կայանի, բերված են աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5. Քամու բնութագիրը

Քամու ուղղություն	քամու կրկնվողությունն ըստ ուղղությունների և անոտրքի, %								
	քամու միջին արագությունը, մ/վրկ								
	Հս	Հս Արլ	Արլ	Հվ Արլ	Հվ	Հվ Արմ	Արմ	Հս Արմ	Անոտրք
I	<u>3</u> 2.0	<u>10</u> 2.1	<u>13</u> 2.2	<u>16</u> 2.8	<u>20</u> 2.6	<u>26</u> 2.3	<u>9</u> 2.7	<u>3</u> 3.4	78
IV	<u>7</u> 3.1	<u>14</u> 2.9	<u>8</u> 2.4	<u>18</u> 3.5	<u>18</u> 3.0	<u>16</u> 3.0	<u>13</u> 4.1	<u>6</u> 3.4	50
VII	<u>17</u> 5.5	<u>31</u> 5.9	<u>3</u> 2.2	<u>9</u> 2.4	<u>16</u> 2.1	<u>13</u> 2.5	<u>7</u> 2.7	<u>4</u> 4.6	40
X	<u>5</u> 2.7	<u>18</u> 2.3	<u>10</u> 1.8	<u>11</u> 2.5	<u>19</u> 2.2	<u>22</u> 2.2	<u>10</u> 2.8	<u>5</u> 3.7	70

Արեգակնային փայլի տևողության, ճառագայթման ուժգնության բնութագիրը և ամպամած օրերի քանակը ներկայացված են 6-8 աղյուսակներում:

Աղյուսակ 6. Արեգակնային ճառագայթում (Երևան)

Գումարային ճառագայթում (ուղիղ + ցրված), որը մուտք է գործում հորիզոնական մակերևույթ անամպ երկինքի դեպքում, ՄՋ/մ ²												միջին տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
264	423	586	804	1043	1182	1068	1047	842	620	339	214	700

Աղյուսակ 7. Արեգակնային փայլի տևողությունը (Երևան “Ագրո”)

Տևողությունը ըստ ամիսների, ժամ												տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
89	118	169	212	283	334	359	352	300	246	144	90	2696

Աղյուսակ 8. Ամպամած օրերի քանակը (Երևան “Ագրո”)

Ըստ ամիսների, օր												տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
10	6	4	2	0.2	0.1	0	0.1	0.3	1	4	11	39

Տարվա հաշվարկային կլիմայական պարամետրերը բերված են 8 և 9 աղյուսակներում:

Աղյուսակ 9. Կլիմայական բնութագիրը տարվա ցուրտ ժամանակահատվածում, Երևան-Էրեբունի

Օդի ջերմաստիճանը, °C										Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Մթնոլորտային տեղումներ և գրունտի սառչման խորությունը		Քամի	
ամենա ցուրտ օրվա		ամենա ցուրտ հինգօրյակի		միջինը ամենացուրտ ժամանակահատվածում	բացարձակ նվազագույնը	ամենացուրտ ամսվա միջին օրական ամպլիտուդա	Տևողությունը (օր) միջին ջերմաստիճանը (°C)								
ապահովվածություն							ժամանակահատվածում, երբ միջին օրական ջերմաստիճանը ոչ ավելի քան՝	0	8	10	միջին ամսական	միջին ամսական ժամը 15-ին	տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	գրունտի սառչման առավելագույն խորությունը, սմ	գերակշռող ուղղությունը դեկտեմբեր-փետրվար ամիսներին
0.98	0.92	0.98	0.92	-3.6	-27	8.3		70 -2.4	140 1.0	159 1.8					

Աղյուսակ 10. Կլիմայական պարամետրերը տարվա տաք ժամանակահատվածում, Երևան-Էրեբունի

Օդի ջերմաստիճանը, °C					Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Մթնոլորտային տեղումներ, մմ		Քամի	
ապահովվածություն		բացարձակ առավելագույնը	ամենատաք ամսվա միջին առավելագույնը	ամենատաք ամսվա միջին օրական ամպլիտուդա						
0.95	0.99				42	33	15.6	45	28	154

2.3. Օդային ավազան

Երևան քաղաքի մթնոլորտային օդի աղտոտվածությունը և ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվական կենտրոն» ՊՈԱԿ (Հայէկոմոնիթորինգ) կողմից:

Համաձայն Հայէկոմոնիթորինգի տվյալների 2017 թ. Երևան քաղաքում կատարվել են ընդհանուր փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործել է պասիվ նմուշառման 45 դիտակետ և յոթ դիտակայան (№1, №2, №7, №8, №16-1 №18 և №19), որից երկուսում՝ №2 և №18 կատարվել են միայն ակտիվ (24-ժամյա), իսկ մնացած հինգ դիտակայանում (№1, №7, №8, №16-1 և №19)՝ ինչպես ակտիվ, այնպես էլ ավտոմատ դիտարկումներ:

Որոշված ցուցանիշների միջին տարեկան կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները (ՄԹԿ):

Աղյուսակ 11. Ակտիվ նմուշառման եղանակով դիտարկումների արդյունքները ք.Երևանում

Որոշվող միացություն (դիտակայանի քանակ)	Դիտարկված առավելագույն կոնցենտրացիա, մգ/մ ³ (դիտակայանի համար)	ՄԹԿ-ից գերազանցումների քանակ		Միջին տարեկան կոնցենտրացիա, մգ/մ ³	ՄԹԿ միջին օրական, մգ/մ ³
		>1 ՄԹԿ	>5 ՄԹԿ		
Ծծմբի երկօքսիդ (7)	0.072 (դիտ. N1)	101	0	0.029	0.05
Ազոտի երկօքսիդ (7)	0.101 (դիտ. N18)	186	0	0.016	0.04
Փոշի (7)	1.548 (դիտ. N18)	301	26	0.103	0.15
Գետնամերձ օզոն (7)	0.043 (դիտ. N18)	3	0	0.007	0.03

2.4. Կենսաբազմազանություն

Ներկայացվող տեղանքը գտնվում է Երևանի ֆլորիստիկ շրջանում, անապատային-կիսաանապատային գոտում, որտեղ հանդիպող բուսականության հիմնական տեսակներն են մատիտեղը, ուղտափուշ պարսկականը, երկտերևը, օշինդրը, Կապար փշոտը, իշառվույտը, կովի առվույտը: Այստեղ հացազգիներից գերակշռում է կծմախոտը, հանդիպում է նաև անապատային սեզ:

Երևանի ֆլորիստիկ շրջանում ողնաշարավոր կենդանիներից հանդիպում են լճագորտ, մողես, սովորական լորտու, տնային ճնճղուկ, մոխրագույն ագռավ, կաչաղակ, սովորական և հասարակական դաշտամուկ, մոխրագույն առնետ, անողնաշարավորներից՝ անձրևաորդ, մրջյուն, մեղու, ծղրիդ, ճռիկ, մորեխ, փայտոջիլ, կապտաթիթեռ, մոծակ, սենյակային և դաշտային ճանճեր, իսկ թռչուններից կոնչան բադ, եղեգնահավ, լոր, թխակապույտ աղավնի, կտցարներ:

Նախատեսվող գործունեության բուն տարածքը Երևանի արդյունաբերական գոտում է՝ զուրկ բնական բուսածածկից:

2.5. Սոցիալական պայմաններ

Նախատեսվող գործունեության տարածքը տեղակայված է Երևանի հարավային արդյունաբերական գոտու եզրամասում: Մոտակա բնակելի թաղամասերը՝ Երևանի Ներքին Շենգավիթ և Էրեբունի վարչական տարածքի բնակելի շենքերը, գտնվում են ավելի քան 2 կմ հեռավորության վրա: Ուստի գործունեության իրականացումը չի կարող ազդել բնակչության առողջության և կենսակերպի վրա:

3. Բնապահպանական և սոցիալական ազդեցություններ

3.1. Ազդեցությունը հողային ռեսուրսների վրա

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- Բաց ծագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած,
- Կիսաանապատային գորշ խճաքարային տեղ-տեղ կարբոնատային,
- Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ավալիացած աղակալած:

Անմիջապես նախատեսվող գործունեության տարածքում բացակայում է բերրի հողի շերտը: Քանի որ նախատեսվող գործունեությունն իրականացվելու է գոյություն ունեցող շինության տարածքում, այդ իսկ պատճառով հողային ռեսուրսների վրա ազդեցությունը բացառվում է:

Հողային և ջրային ռեսուրսների պահպանության նպատակով յուղերի փակ տարաները նախատեսվում է պահել շինության պահեստային հատվածում՝ պահպանելով տեխնիկական անվտանգության բոլոր կանոնները:

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ բնապահպանական ռիսկերը հիմնականում կապված են մոնտաժային և շահագործման աշխատանքների հետ, որոնցից հիմնականներն են.

- սարքավորումների մոնտաժային աշխատանքների իրականացման արդյուքում առաջացող ժամանակավոր աղմուկ,
- արտադրամասի շահագործման ընթացքում աղտոտում յուղերով՝ դրանց ընդունման, պահեստավորման, և առաքման ոչ ճիշտ կազմակերպման պայմաններում:

Թվարկված գործընթացների ազդեցությունը նվազեցնելու նպատակով հիմնական գնահատման փուլում (ՇՄԱԳ) կմշակվի բնապահպանական կառավարման պլան՝ հաապատասխան բնապահպանական, սոցիալական մեղմացման միջոցառումներով: Մույն հայտում համառոտ ներկայացված են հիմնական բնապահպանական միջոցառումներն՝ ըստ ազդեցության ուղղությունների:

3.2. Ազդեցություն մթնոլորտային օդի և ջրային ռեսուրսների վրա

КД6 տիպի վակուումային վառարանում, որպես վառելանյութ, տարեկան նախատեսվում է օգտագործել 30 000 մ³/տ բնական գազ, որի այրման հետևանքով դեպի մթնոլորտ կարտանետվեն ածխածնի օքսիդ և ազոտի օքսիդներ:

Մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի ցանկը, նրանց սահմանային թույլատրելի խտությունները և վտանգավորության դասը ներկայացված է ստորև՝ համաձայն մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին» M160-Ն որոշման M1 հավելվածի:

Նյութի անվանումը	ՍԹԿ (մգ/մ ³) (առավել. միանվագ)	Վտանգավորության դասը
Ածխածնի օքսիդ	5,0	4
Ազոտի օքսիդներ	0,2	3

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- ապահովել մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետումների համապատասխանությունը սահմանված սահմանային թույլատրելի նորմատիվներին,
- պահեստավորել հավաքված յուղերը համապատասխան կոնտեյներում՝ ապահովելով դրանց հերմետիկությունը և հրդեհանվտանգությունը,
- կարգաբերել բոլոր տեխնիկական սարքավորումները՝ համաձայն սարքավորումների տեխնիկական անձնագրերի,
- իրականացնել բոլոր սարքավորումների կանոնավոր տեխնիկական սպասարկում բարձրորակ մասնագետների կողմից:

Տեխնիկական կարիքների նպատակով ջուրը նախատեսվում է օգտագործել միայն փակ շրջանառու պոմպերով և խողովակներով՝ տաք յուղերի հովացման համար: Աշխատողների խմելու և կենցաղային կարիքների արդյունքում առաջացած կենցաղային կեղտաջրերը (0.16մ³/օր) կհեռացվեն գործող կոյուղատարով:

3.3. Թափոնների կառավարում

Ըստ նախնական գնահատման մոնտաժային աշխատանքների ժամանակ շինարք չի առաջանա, քանի որ արդեն գոյություն ունեղող շինության ներսում նախատեսվում է իրականացնել միայն սարքավորումների մոտաժման աշխատանքներ:

Կենցաղային թափոնների դեպքում հաշվի կառնվեն հետևյալ սկզբունքները՝

- խուսափել-նվազեցնել-վերաօգտագործել-վնասազերծել- հեռացնել,

- թափոնների առանձնացում՝ արտադրամասի տարբեր տարածքներում աղբի հավաքման տարողությունները տեղադրում,
- անձնակազմի վերապատրաստում:

3.4. Աշխատանքի անվտանգություն

- Աշխատողների վերապատրաստում (արտադրական անվտանգության կանոններ, վտանգավոր նյութերի հետ աշխատելու կանոններ, ուսուցում վտանգավոր նյութերի հատկությունների վերաբերյալ, առաջին բուժօգնություն ցուցաբերում, փրկարարական տեխնիկայից օգտվելու կանոններ և այլն),
- աշխատողներին անհատական պաշտպանական միջոցների տրամադրում,
- նախազգուշացնող նշանների (օր.՝ «հրդեհավտանգ») տեղադրում,
- սանիտարահիգիենիկ պայմանների ապահովում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ բնապահպանության նախարարություն, (2014): Չորրորդ Ազգային հաղորդագրություն: <http://www.mnr.am>
2. ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ
3. Ազգային Ատլաս, Երևան, 2007
4. СНиП 1.02-01-85. Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятия, зданий и сооружений.
5. Строительная климатология, Ереван, 1996 г.

Հավելված 1. Նախատեսվող գործունեության տարածքի պետական գրանցման վկայագիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԿԱՅԱԿԱՆ
ՄԵԾԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՐ ԻՐԱՎՈՒՆԵՐՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ**

Սույն վկայականով հաստատվում է «30» Նոյեմբերի 2016 թվականին զույգի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատչանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆԵՐԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)

ՍՒԼՈ ՏԻԳՐԱՅԱՆ ՎԱՐՈՒԹՄԱՆ

2. ՄԵԾԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ՄԼՎԱԼՈՒՄԸ

Երևան, Ծենկաչիթ Թեքեբաևի փողոց 3/4

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

25.11.2016թ 8954 Առուվաճառի պայմանագիր, 25.11.2016թ 000622 հողամասի կառ, արժեքի վճարման անդրդրագիր

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲԵՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 01-011-0521-0022

Մակերեսի չափը (հա)՝ 0.1334

Նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության

Գործառնական նշանակությունը կամ հողատեքը՝ Արդյունաբերական օբյեկտների

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԵՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ Արտադրական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Ի	Կադաստրային ծածկագիրը	Տեսակը	Մակերեսի չափը	Գրանցված իրավունքի տեսակը
1	01-011-0521-0022-001	Պահեստ	255.6 ք.մ.	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
2	01-011-0521-0022-003	Գորակոց	39.1 ք.մ.	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Սույա են ընդհանուր 24.9քմ մակերեսով ինքնակալ շինություններ, մեկ ինքնակալ բացված դուռ, երկու հատ սրատուհան:


Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Արմենուհի Հարությունյան

զբաղեցրած պաշտոնը՝ Երևանի տարածքային ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր Կ.Տ.


Հավելված 2. Նախատեսվող գործունեության իրավիճակի հաստակագիծ



Հավելված 3. Նախատեսվող գործունեության տեխնոլոգիական սխեմա




Հավելված 4. Նախատեսվող գործունեության արտդրամասի տեխնոլոգիական հատակագիծ



Հավելված 5. Հանրային քննարկման մանրամասներ

Երևան քաղաքի շահառու և ազդակիր հանրությունը իրազեկվել է նախատեսվող սույն գործունեության իրականացման վերաբերյալ:

Առաջին հանրային քննարկումը կազմակերպվել է հանրային քննարկման և ծանուցումների իրականացման կարգի համաձայն, ըստ որի հանդիպման վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը հասանելի է եղել «Հայաստանի Հանրապետություն» պաշտոնական օրաթերթի 2018թ. փետրվարի 7-ի համարում:



Հանրային քննարկումն անցկացվել է փետրվարի 16-ին Երևանի Շենգավիթ վարչական շրջանի Բագրատույնաց 60 հասցեում, որին մասնակցել են ներկայացուցիչներ Երևանի քաղաքապետարանից, նախաձեռնող ընկերությունից («Էմ-Բի-Էմ-Եյու» ՍՊԸ), բնակիչներ Երևան քաղաքի Շենգավիթ և Էրեբունի վարչական շրջաններից՝ ընդհանուր առմամբ 27 մարդ:

Հանրային քննարկման արձանագրությունը և մասնակիցների ցուցակը բերված է ստորև, իսկ հանրային քննարկման արդյունքում կազմված տեսաձայնագրությունը ներկայացվում է սույն նախնական գնահատման հայտին կից:

Հանրային քննարկման լուսանկարներ



ք. Երևան, 16.02.2018